

ՏԵՂԵԿԱԼՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ 01.09.2016-31.08.2017ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից նախաձեռնած բարեփոխումներն առավելապես ուղղված են եղել ներդրումային միջավայրի բարելավման նպատակով հարկային արտոնությունների ընդլայնմանը, մաքսային ընթացակարգերի պարզեցմանը, ստվերի դեմ պայքարին և օրինապահ հարկ վճարողների համար տնտեսական խթանների ընդլայնմանը: ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից աշխատանքներն իրականացվել են հետևյալ հիմնական ուղղություններով:

1. Ստվերային տնտեսության ծավալների կրճատման ուղղությամբ իրականացվող հետևողական աշխատանքի արդյունքում հաջողվել է 2016 թվականի սեպտեմբերից մինչև 2017 թվականի օգոստոս ամիսներին ապահովել 1,139,451.1 մլն. դրամ հարկային և մաքսային եկամուտներ (ներառյալ ԱԱՀ վերադարձի գումարը), ինչը շուրջ 6.6 տոկոսով կամ 70,867.1 մլն. դրամով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշը, իսկ նույն ժամանակաշրջանում հարկային և մաքսային եկամուտներն առանց ԱԱՀ վերադարձի գումարների կազմել են 1,082,122.6 մլն. դրամ, ինչը շուրջ 6.3 տոկոսով կամ 63,852.4 մլն դրամով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշը:

2. Հարկային վարչարության արդյունավետության բարձրացման արդյունքում կրճատվել է ՀՀ պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակներին վերաբերող գերավճարները և ապառքները, մասնավորապես. 01.09.2016-31.08.2017 թվականների ընթացքում ՀՀ պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակներին վերաբերող գերավճարները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել են 6.401.2 մլն դրամով՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ին կազմելով 265,484.7 մլն դրամ, իսկ չկատարված հարկային պարտավորությունները 2017 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 122,750.0 մլն. դրամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 7,459.1 մլն. դրամով:

3. 01.09.2016-31.08.2017 թվականների ընթացքում ԱԱՀ-ի վերադարձված գումարը կազմել է 57,328.5 մլն. դրամ, ինչը շուրջ 16%-ով կամ 7,920.1 մլն դրամով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշից:

4. Հարկային ստուգումներն առավել հասցեական և արդյունավետ դարձնելու նպատակով կատարելագործվել է ստուգման ենթակա ռիսկային հարկ վճարողների ընտրողականության ավտոմատ համակարգը, ինչը նաև հնարավորություն է ընձեռել շուրջ 47.8 տոկոսով կրճատել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների և ուսումնասիրությունների թվաքանակը:

5. ՀՀ կառավարության 18.05.2017թ. «ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 224-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 514-Ն որոշմամբ՝ հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի նոր կառուցվածքը: Մասնավորապես, լուծարվել են հարկային (տարածքային) տեսչությունները, վերջիններիս փոխարեն ստեղծվել են թվով 3 վարչություններ, և դրանք ներառվել են կոմիտեի աշխատակազմի ստորաբաժանումների կազմում՝ որպես վերադաս հարկային մարմնի ստորաբաժանումներ: Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կրճատվել է նաև մաքսատների թվաքանակը և դրանք՝ որպես վերադաս մաքսային մարմնի վարչություններ ներառվել են կոմիտեի աշխատակազմի կառուցվածքում:

6. ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում իրականացվող վերլուծական և ռիսկերի բացահայտման գործընթացների բարելավման, ինչպես նաև հարկ վճարողների գործունեության նկատմամբ իրականացվող տեսչական ընթացիկ հսկողությունը էլեկտրոնային հսկողությամբ փոխարինելու նպատակով՝ գործարկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ մոնիտորինգային կենտրոնը, որի կողմից 2017 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ իրականացված մոնիտորինգի արդյունքներով հարկ վճարողներին ուղարկվել են թվով 3040 ծանուցումներ:

7. Օրինապահ հարկ վճարողներին խրախուսելու և նրանց հետ գործընկերային հարաբերությունները զարգացնելու նպատակով ներդրվել է «Օրինապահ հարկ վճարող» կարգավիճակի տրամադրման

համակարգը, ինչն այդ կարգավիճակն ունեցող հարկ վճարողներին մի շարք հանգամանքներում տալիս է մրցակցային առավելություններ: 2017 թվականի առաջին ութ ամիսների արդյունքներով՝ օրինապահ հարկ վճարողի հավաստագրի է տրամադրվել 129 հարկ վճարողի, որոնց ցանկերը հրապարակվել են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

8. ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան՝ հարկային ապառքներ կուտակած հարկ վճարողներին աջակցելու նպատակով ընդունվել են հարկային համաներում նախատեսող համապատասխան օրենքներ, որով սահմանվել են հարկ վճարողների հարկային պարտավորությունների համար հաշվեգրված տույժերից ու տուգանքներից ազատում, հատուկ ուշադրություն է հատկացվել միկրոձեռնարկատիրության ոլորտին՝ ինքնագրաված անձինք ազատվել են հարկերից, իսկ փաստացի գործունեություն չիրականացնող, գույք և հարկային պարտավորություններ չունեցող հարկ վճարողներին պարզեցված ընթացակարգով լուծարվելու հնարավորություն է ընձեռվել:

9. ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան՝ օտարերկրացիների, այդ թվում՝ զբոսաշրջիկների կողմից ՀՀ տարածքում գնումների կատարումը խթանելու նպատակով ընդլայնվել է օտարերկրյա ֆիզիկական անձանց ԱԱՀ-ի վերադարձի կիրառության շրջանակը՝ գնումների մեծության նվազագույն սահմանաչափը 2 անգամ իջեցվել է՝ 100 հազ. դրամի փոխարեն սահմանվելով 50 հազ. դրամի չափով:

10. Արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության շրջանակներում՝ արտահանողներին ԱԱՀ-ի գումարների վերադարձման ընթացակարգը պարզեցնելու և ժամկետները կրճատելու նպատակով՝ 2017 թվականի ապրիլի 13-ից ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 30.03.2017թ. թիվ 333-Ն որոշումը, որով, մասնավորապես, սահմանվել է, որ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների՝ մինչև 20 միլիոն դրամի հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարների միասնական հաշիվ մուտքագրման պարզեցված ընթացակարգը և ժամկետները:

Միաժամանակ 01.09.2016-31.08.2017թթ. ժամանակահատվածում 20 միլիոն դրամից ավել հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարներն օրենքով նախատեսված մինչև 180 օրվա ընթացքում վերադարձնելու պայմաններում դրանք փաստացի վերադարձվել են միջինում 77 օրվա ընթացքում:

11. Ընդլայնվել են ոչ ռիսկային համարվող երկրներից կատարվող ներմուծումների մասով գործարքի գնի մեթոդով մաքսային արժեքի որոշման շրջանակները և վերանայվել են մաքսային արժեքի հայտարարագրման մոտեցումները:

12. 2016 թվականի դեկտեմբերի 1-ից գործարկվել է մաքսային արժեքի էլեկտրոնային հայտարարագրման համակարգը, որը նվազագույնի է հասցնում մաքսավոր-հայտարարատու շփումները՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: Արդյունքում, բարելավվել է գործարքի գնի մեթոդով մաքսային արժեքի որոշման գործընթացը՝ այդ մեթոդով մաքսային արժեքի որոշման տեսակարար կշիռը հասցնելով շուրջ 68 տոկոսի:

13. 2017 հունվարի 1-ից տնտեսավարող սուբյեկտների համար ապահովվել է մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի հասանելիությունն առանց որևէ վճարի վճարման:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԲԱՐԵՓՈՒՍՆԵՐ

1. Մաքսային հսկողության համար «Կապույտ ուղի» ընթացակարգի ներդրում, ինչը նշանակում է, որ մաքսային հսկողությունը սահմանին նվազագույնի է հասցվում, փոխարենը տնտեսավարող սուբյեկտը տեղեկացվում է, որ մաքսային հսկողությունը լինելու է հետբացթողումային փուլում: Այդ նպատակով ներդնել ռիսկերի կառավարման համակարգ:

2. Հարկային մարմնի կողմից վերահսկվող պետական բյուջե վճարվող հարկային եկամուտների վճարման մեկ միասնական հաշվի ներդրման ապահովում:

3. Հարկային մարմնում իրականացվող վերլուծությունների կենտրոնացում մոնիտորինգային կենտրոնում, կամերալ ուսումնասիրությունների իրականացման ավտոմատ համակարգի գործարկում:

4. Մեքենաների, սարքավորումների և հումքային ապրանքների ներմուծումն ավելացված արժեքի հարկից ազատում:

5. Հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների գերազանցող մասի հաշվանցման կամ վերադարձման հնարավորության ընձեռում: